Ասլանը իր խօսակցութիւնը բեւեռաձեւ արձանագրութիւնների վրայ դարձնելու նպատակն էլ հէնց այդ էր, որ միջնաբերդը տեսնէ: Այդ պատճառով, երբ որ լսեց փաշայի վերջին խոստմունքը, մեծ շնորհակալութիւն յայտնեց եւ վերկացաւ: Փաշան նոյնպէս վերկացաւ, նրան ճանապարհ դրեց մինչեւ սենեակի դուռը եւ բաժանելու միջոցին հարիւրաւոր շողոքորթութեօլներով հեղեղեց իր «թանկագին» հիւրին...

Նոյն կերպով, նոյն հանդէսով, որպէս ղավազները մեզ բերել էին փաշայի ապարանքը, դարձեալ նոյն պատոով մեզ տարան Այգեստան, մինչեւ վարպետ Փանոսի տունը: Ասլանը դրեց ղավազների իւրաքանչիւրի ափի մէջ մի-մի ոսկի, եւնրանք շնորհակալութեամբ հեռացան:

Մտնելով մեզ համար պատրաստուած սենեակը, Ասլանը ծիծաղելով իր գլխարկը մի կողմ ձգեց եւ, գլուխը զարմացած կերպով շարժելով, կանգնեց սենեակի մէջտեղում եւ, դառնալով դէպի ինձ, ասաց.

— Խելացի՜ մարդիկ են... խելացի՜... գիտեն իրանց գործը... Եթէ ես իսկապէս եւրոպացի լինէի, եթէ չճանաչէի այդ անպիտաններին, անպատճառ հիացած կը մնայի այդ մարդուց:

Նրա խօսքը փաշայի մասին էր: Ներս մտաւ վարպետ Փանոսը եւ անհամբերութեամբ հարցրեց, թէ ինչպէս անցաւ նրա այցելութիւնը: Ասլանը համառօտ կերպով պատմեց բոլորը եւ ապա աւելացրեց.

— Եթէ դուք գիտենայիք եւրոպական լեզուներ, եթէ դուք կարդայիք, թէ ի՞նչ են գրում եւրոպացի ճանապարհորդները թուրք ժողովրդի եւ թուրք պաշտօնեաների մասին, դուք այդ ճանապարհորդներին կատարեալ խելագարի տեղ կը դնէիք: Նրանց նկարագրութիւնների մէջ թուրք ժողովուրդը բարի է, աշխատասէր է, յառաջադիմութեան ընդունակ է. նրանց նկարագրութիւնների մէջ թուրք պաշտօնեան, թուրք աստիճանաւորը ազնիւ է, մեծահոգի է, գեղեցիկ ձգտումներ ունի, հիւրասէր է, առատաձեռն է, մի խօսքով, հիացած են նրանցով, եւ ամէն լաւ յատկութիւններ վերաբերում են այդ հրէշներին: Ինչի՞ց է առաջ գալիս այդ հիացումը: Երեւակայեցէք, մի անյայտ եւրոպացի, որին իր երկրում ոչ ոք մարդու տեղ չի դնում, որի հետ իր երկրի ամենայետին հիւրանոցում սպասաւորը իրան թոյլ կը տայ կոպտութեամբ վարոել, յանկարծ մի այսպիսի մարդու խելքին փչում է՝ արեւելքում ճանապարհորդութիւններ անել: Նրա եւրոպացի լինելը բաւական է, որ նրան ամէն տեղ լաւ ընդունէին, որովհետեւ նա այս ու այն մեծ պետութեան քաղաքացին է: Այսոամենայնիւ, նա զինուած է լինում զանազան յանձնարարական թղթերով, որ ստանում է իր դեսպանի կամ հիւպատոսների շնորհիւ: Եթէ նրա հետ վատ կը վարոեն, նրա պետութեան դեսպանը կամ հիւպատոսնե-